ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախարար պարոն Ա. Հարությունյանին

Դիմող՝ Սյուզանա Աղաբեկյան

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Հարությունյան.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42 եւ 51 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունը՝ որքա՞ն գումար է ծախսվել ՀՀ պետական բյուջեից և այլ ֆինանսական աղբյուրներից 2019 թվականին հրատարակված նոր դասագրքերի համար: Խնդրում եմ տվյալները ներկայացնել առանձնացված:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ՝
Սյուզանա Աղաբեկյան

26.09.2019

Հ.Գ.՝ Սեպտեմբերի 28-ը տեղեկատվության ազատության միջազգային օրն է: